ցած է, բայց առաջիկայ գարնան բարեյարմար միջոցին 'ի գլուխ հանելոյ լոյս կ'տեսնայ թերևս,

Որովհետև Արարատ քաղցր է բարեհամբաւ Ազգասիրական լուրերով մխիթար և յորդոր կարդալ Ազգասէր սիրելեաց՝ իւրեան թերթերու էջերով, դայս ևս տպագրութեան տալով շնորհ կ'ունենայ նորա Ազգասիրական ձեռնարկութիւնք անմահացնել 'ի մխիթարութիւն նոցա ։

Գրիգոր Յովհաննէսեան
Մահտեսի Աստուածատրեանց ։

31 Յունվարի 1870 ամ.
ի Քաղաքն Նուխի.

ՄԵՐ ԱԶԳԻՆ ԹԱՏՐՈՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՌՕՏ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ.

Յայտնի բան է որ ընկերութեան մը որ և իցէ բարենպատակ ձեռնարկը 'ի սկզբան չունենար ակնկալեալ յաջողութիւնները, և պէսպէս արգելառիթ պատճառները, ինչպէս դրամական պակասութիւնը, ընկերութեան անդամոց իրարու հետ ունեցած անհամաձայնութիւնները, և կամ արտաքին խափանարար հանգամանքները շատ անգամ կուշացընեն ընկերութեան զարգացումը և երբեմն բոլորովին կխանգարեն նորա ամբողջութիւնը։ Քիչ չեն ասածիս նման ընկերութիւններ որ կարճ միջոցի մէջ խզպառ խանգարուած են։ Քանի մի մարդասիրական և ընթերցասիրական ընկերութիւններ այնպիսի անպտուղ հետևանք ունեցած են զանազան հայաբնակ Քաղաքաց մէջ. բայց այսու ամենայնիւ ուրախալի բան է տեսնելը՝ որ հետզհետէ ուսման յարգը ճանաչելով Հայոց նոր սերունդը, ուսոյ բարենպատակ ընկերութեանց օգուտները, միաբան սիրով և համաձայնութեամբ բոլոր ջանքերնին կթափեն այսպիսի ընկերութեանց յարատեւութեանը և առաջադիմութեանը։ Այո, հայ երիտասարդութիւնը, եթէ ոչ ամենայն տեղ, գոնէ բազմաթիւ հայաբնակ Քաղաքաց մէջ քանի մի տարիէ 'ի վեր լաւ խելամուտ լինելով ազգային իրաւանց և պարտուց բարոյապէս կրթելու դիւրին միջոցներուն՝ ձեռնարկած են ազգին պատմութենէն և նորա կեանքէն խիկ ընտրել օգտակար նիւթեր և աչքին առջեւ դնելով նախնեաց քաջութիւններն և մեր արդի բազմաթիւ բարոյական թերութիւնները թէ ընդհանուր մարդկայնութեան և թէ առանձին ընտանեկան կեանքի մէջ, արծարծել շատ տեղ մարած ազգային եռանդը և հաստատել նորա մէջ բուն հայկական պարկեշտ քաղաքավարութիւնը։ Եւ այս նպատակին հասնելու համար քանի մի տեղեր ժրաջան գործունէութեամբ հաստատուած են Թատրոնական ընկերութիւններ որոնք թէպէտ առ այժմ հարկ եղածին չափ չեն վայելեր քաղաքացւոց համակրութիւնը՝, ըստ որում մեր քաղաքացիներուն չորրորդ մասին մէկը հազիւ կհասկանայ թատրախաղութեան օգուտները, բայց յուսալի է որ ընկերութեան հաստատամիտ անդամոց ջանքը հետզհետէ և այս դժուարութեան առաջը կառնէ միմեանց հետ կատարեալ համաձայնութիւն ունենալով և ժողովրդեան ախորժելի կացուցանելով իրենց վերայ առած դերերը։

Ագուլիսի, Երևանայ, Տփխիսու և Նորերս Նոր—Նախիջևանու մէջ հաստատուած թատրոնները արդարև պէտք է խրախուսական պատճառ լինին ուրիշ Հայաբնակ քաղաքաց մէջ, ինչպէս Ալեքսանդրապօլի, Աժտէրխանայ, Քիշնեւի, Վաղարշապատի և այլոց (հայաբնակ) քաղաքաց մէջ նոյնպիսի Թատրոնական ընկերութիւններ հաստատուելուն. վասն զի վերջին յիշուած քաղաքներուն մէջ ևս պակաս չեն քանի մի յառաջադէմ և ուսամիտ երիտասարդներ, որոց նուիրական պարտքն է ըստ իս՝ այս զգալի թատերական Դպրոցը բանալ իրենց քաղաքաց մէջ ևս ժողովրդեան բարոյական և մտաւոր կրթութեանը համար։

Ցաւօք սրտի կպարտաւորիմ ասել՝ թէ վերոյիշեալ քաղաքաց մէջ եղած թատրոնախաղութիւնը առ այժմ հաստատուն չէ. և որպէս միշտ, նոյնպէս և այժմ մեր ազգին մէջ տեսնուած եռանդնալից աշխոյժը այս մասին շուտով կմարի կանհետանայ՛, ինչպէս Տփխիսու մէջ եղած կերևի, նոյնպէս և Ագուլեաց մէջ։ Նոր-Նախիջևանու նորահաստատ թատրոնը Արտաքին գործոց Նախարարին թոյլտուութեամբը և Պ. Փասուլեաճանի ջանասիրութեամբը հաստատուելով՝ մեծ յոյսեր կուտայ յապագային եթէ Նոր-Նախիջևանցիք պատահական մէկ քանի անախորժ անցքերէ չվհատելով՝ չխնայեն իրենց ձեռնտուութիւնը այդ բարեմիտ ձեռնարկութեան և լիովին ճանչնան թատերախաղու-

թեան օգուտները։ Նոր Նախիջևանէն, ինչպէս նաև Տփխիսէն մեծ ակնկալութիւն ունի Աղդը. կ.յուսամք որ այս քաղաքները'ի դերև չեն հաներ հասարակաց յոյսը՝ աշխատելով միշտ հաստատուն պահելու բարենպատակ ընկերութիւնները։ Խօսիմք փոքր ինչ Երևանայ վերայ, ուր բարի նախանձով վառուած հայ երիտասարդութիւնը երկու թատերական խումբ բաժնուած է և այս ձմեռ քանի մի անգամ՝ ողբերգութիւններ և կատակերգութիւններ ձևացուցած է, որոց դժբաղդաբար միայն մէկուն՝ այն է՝ Աբամելիքեան ընկերութեան ձևացուցած ողբերգութեանը արժանացանք հանդիպելու։ Ողբերգութիւնը Արշակ Բ.րդ էր. որոյ խղճալի մահը և պատահած ողբոյ արժանի հանգամանքները Հայաստանի մէջ շատերուն յայտնի լինելով՝ երկարաբան չեմք ուզեր լինել, հապա իրրև ականատես վկայ յաջող ձևացուցման այն ողբերգութեան՝ արժան կհամարիմք մէկ քանի խորհրդածութիւններ ընելու այս մասին։

Յայտնի է որ Արշակ Բ. Գերապատիւ Խորէն Եպիսկոպոսի, տաղանդաւոր աղգային բանաստեղծի գրչին արժանաւոր ծնունդն է և քանի մի քաղաքներ յաջողութեամբ ձևացուցուած է, թէ և փոքր ինչ կրճատած և տեղական բարքառներուն յարմարցուցած՝ ժողովրդեան հասկանալի ընելու համար։

Այս Թատերախաղը սկսաւ Երևանայ մէջ փետրուարի 2ին Կիւրակէ օրը կէսօրին Ս. Սարգիս մայր եկեղեցւոյ սրահին մէջ գտնուած Հոգևոր Դպրոցին մեծ դահլիճը, յորում՝ քանի մի տարիէ'ի վեր Պ. Սաղոմոն Աբամելիքեանի, Երևանայ Նահանգական Դատարանի Փրիսթաւին, և այժմեան Թատերական ընկերութեան վերատեսչի անդուլ ջանքովը բարեզարդ հաստատուած է Թատրոնը։ Երևանայ ծողովուրդը թէ ռուս, թէ հայ և թէ տաճիկ՝ հետզհետէ ժողովուելով գրեթէ բոլոր նատարանները բռնեցին, որ մեծ նշան է տեղւոյն ժողովրդեան կատարեալ համակրութեանը ասր թատրոնը և մանաւանդ որ ուրիշ ազգերը մինչև ցայժմ չեն կարողացած իրենց համար ունենալ առանձին թատրոն. բայց ինչպէս որ կըսուի, Հայոց այսպիսի եռանդը բարի օրինակ լինելու վերայ է և այլոց բնակչաց քաղաքին։ Զինուորական երաժշտաց լուսէն ու երրորդ զանգակի ձայնէն յետոյ բացուեցաւ վարագոյրը և երևեցան Հայոց ձիւնաղարդ լերանց գագաթները բաւական յաջող վրձինով նկարուած։ Հայ իշխանաց, Շապհոյ, բանտապետի, զինուորաց, Արշակայ և այլոց հագուստները, որ նոյն Պ. Աբամելիքեանցի խորհրդով կարուած են, յարմարաւոր էին յոյժ ողբերգութեան հոգւոյն՝ դերասանաց կատարած գերերումն։ Երկրորդ, երրորդ արարուածին բանը, և չորրորդ ու հինգերորդին ծառաղարդ և գեղեցկանկար պարտէզներ՝ արդարև մեծ պատիւ կբերեն Պ. Աբամելիքեանցին, որ իւր թատրոնական տեղեկութեամբը և քաջայարմար դասաւորութեամբ ամենայն զարդերու՝ կարողացաւ գրաւել հանդիսատեսաց ուշը և կրկին ծափահարութեան արժանանալ'ի վերջոյ։ Դերասանները լաւ սերտած լինելով իրենց դերերը և ողբերգութեան ոգին առած լինելով՝ լաւ ազդեցութիւն ունեցան ժողովրդեան վերայ. որուն վկայ է այն լռութիւնը և ուշադրութիւնը, որով հանդիսատեսք զբաղուած էին թատրոնի տեսարաններով. և ամենայն արարուածէն յետոյ իրենց սրտալիր շնորհակալութիւնը անկեղծօրէն կմատուցանէին դերասանաց։ Այս ողբերգութեան հարկաւոր և ուշադրութեան արժանի գերը անտարակոյս Արշակին էր. որոյ ցնորքներն, յուսահատութիւնը և անակնկալ ուրախութիւնը, երբեմն սրտառուչ աղօթքը և վերջապէս սրտաշարժ մահը կատարելու համար քաջութեամբ, հարկաւ փորձառու և տաղանդաւոր անձն պիտի լինէր, և բարեբաղդաբար ժողովրդեան ակնկալութենէ վեր կատարեալ յաջողութեամբ կատարեց վաղարշապատայ Հաշտարար Դատարանի Ատենադպրի օգնականն ու նոյն Դատարանի Թարգման Պ. Վաղարշակը, որոյ այսպիսի բաներու ունեցած յարմարութիւնը վաղուց յայտնի է նաև Թիֆլիսեցւոց։ Մենք պարտք կհամարիմք յայտնել իրեն մեր լիուլի շնորհակալութիւնը նաև բոլոր ընկերութեան կողմանէ, որ չընայելով իւր բազմադիմի զբաղմանցն, յանձնառու եղաւ յօդուտ տեղւոյն Հոգևոր Դպրոցի և հասարակութեան՝ բոլորանուէր սիրով ընդունել այս դժուարին գերին կատարումը։

Ողբերգութիւնը վերջանալէն յետոյ դերասաններէն չորսը փոքրիկ կատակերգութիւն մը բարեհաճեցան կատարել Հոյս Հայոց կամ Պ[illegible]ֆնոյ անունով, որ Ղզլար Ցարութիւն Ոստանիկ

ուսումնասէր անձը շարադրած է, և լաւ ներկայացուցած է անով մեր հինակուան հասարակութեան ոմանց Ուսումնարանաց շինութեան վերայ ունեցած խախուտ գաղափարը։

Պէտրոս [illegible] ծախահարութեամբ ընդունելութեան հանդիսատեսներէն՝ գրեթէ ամէնքը խոստովանելով թէ արդարև լոկ խօսքով և ո՛չ արդեամբ կշինուին ու շուտով կկանգնուին ազգին Դպրոցները. հանդիսականք գոհ սրտով գնացին իրենց տները և հարկաւ շատերուն հաւանական եղաւ Դպրոցաց օգուտները։ Կցանկանք որ Եգտերցւոց ևս հաւանական լինի Դպրոցին օգուտը։

Թատրախաղը լմնալէն յետոյ երեկոյեան ժամը 6ին դերասանք ժողովեցան Սիմէօն վարժապետին տանը, որ նոյնպէս նախանձախնդիր է թատրոնի յառաջդիմութեան, և բաժակներ գինւոյ դատարկուեցան բոլոր դերասանաց կենացը։

Այսպէս ահա, սիրելի ընթերցող, վերջացաւ նոյն օրուան թատրախաղութիւնը, և ես ևս գոհ սրտով և լիայոյս մեր Երևանեայ ազգային եղբարց ապագայ յառաջդիմութեանը, վերադարձայ ՚ի Ս. Էջմիածին՝ և անհրաժեշտ պարտք համարեցայ անձին՝ այս ազգային հանդէսը և քեզ հաղորդել յուրախակցութիւն և ՚ի յարբ նախանձ շարժելու համար ամենայն Հայաբնակ քաղաքաց մեր ազգասէր եղբայրները։

Ս. Մատթէոսեան

Ի Ս. Էջմիածին։

Խմբագրութեան Արարատ ամսագրոյ

Հոգաբարձութիւն Աստրախանայ Հայոց Հոգևոր Դպրոցաց շնորհ ունի խոնարհաբար մատուցանել Խմբագրութեան Արարատ՝ ցուցակս մտից և ծախուց, թուոց Ուսուցչաց և ուսանողաց Հոգևոր Դպրոցաց իւրոց վասն 1869 ամի, առ ՚ի հրատարակել միջոցաւ ամսագրոյդ յընդհանուր գիտութիւն բարենախանձ և ուսումնասէր համազգեաց։

Համար 19.
5ն փետր.
1870 ամի
Աստրախան.

Հոգաբարձուք՝ Յովսէփ ա. Քահանայ Բունիաթեանց
Քրիստափոր Դադաշեանց
Գրիգոր Սողոմոնեանց
Սարգիս Բուրջալեանց
Սիմէօն Պօպովեանց

ՀԱՄԱՌՕՏ ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿ ՄՏԻՑ ԵՒ ԾԱԽՈՒՑ ԳՈՒՄԱՐԱՑ ԱՍՏՐԱԽԱՆԱՑ ՀԱՅՈՑ ԾԽԱԿԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԱՑ ԸՆԹԱՑՍ 1869 ԱՄԻ.

Համր.	ՄՈՒՏՔ	Գումար	
		ր.	կ.
1	Մնացորդք ՚ի 1868 ամէ՝ պատրաստի դրամի.	47	65
	ՄՈՒՏՔ 1869 ԱՄԻ		
2	Ի տոկոսեաց գումարաց Աստրախանայ Ս. Աստուածածնի և Սրբոց Պետրոսի և Պօղոսի եկեղեցեաց՝ ըստ հաւասար մասանց	1000	
3	Ի կտակակատարէ հանգուցելոյ Բուրվառգեանի՝ յԱստրախանայ Արքահամու Փասյեանց՝ ՚ի 1868 ամէ — 160 րուբլի և վասն ամբողջ 1869 ամի — 350 րուբլի. ընդ ամենն	510	
4	Ի Վաճառամանէ գրեանց	71	61
5	Ի Թոշակառու աշակերտաց	102	
6	Գանձանակադրամք	189	3
7	Ընծայաբերութիւնք՝ 1 հատ 5% բիլետ Թագաւորական բանկի 1860 ամի 105,229 համարաւ(*)	1000	
	Պատրաստի դրամք.	28	48
8	Տուգանք ՚ի ոմանց Ուսուցչաց վասն ՚ի բաց թողելոյ դասուց	—	50
9	Պատրաստի դրամք փոխարինեալք ՚ի բիլետս Արքունական Գանձարանի (սէրիս).	500	
10	Տոկոսիք բիլետաց	79	14
	Ընդամենն	3528	40

*) 5% բիլետն նուիրեալ է Աստրախանայ բնակիչ Պարոն Կարապետ Զաքարեան Գալստեանց։